

1765

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ԾՐԱԳՐԵՐ
ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ



74

տ-26

ԼՈՒԾՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1938

21 OCT 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍ

74
S-26 *uo*

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ԾՐԱԳՐԵՐ
ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

—

ԼՈՒՍՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1938



6310
38

Պատ. խմբ.՝ Վ. ԱձԵՄՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբազրիչ՝ Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավիտի լիազոր՝ Յ—3637 պատվեր № 287, տիրած 2000
Հանձնված է արտադրության 14 հոկտեմբերին 1938 թ.
Ստորագրված է ապագրելու 25 հոկտեմբերի 1938 թ.

Մանկավարժական Խնամակալության, Մարտի 4. № 17 Յերեվան.

Ն Կ Ա Ր Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն *

Բ ա ց ա ս ր ա գ ի ր

Տարրական դպրոցում նկարչության խնդիրն է՝ տալ նովորոդներին այն հմտությունը և ունակությունները, վերոնք նրանց անհրաժեշտ են իրենց շրջապատող առարկաները գրագետ կերպով պատկերելու համար:

Ուստի ուսուցիչը սխտեմատիկ առաջադրությունների միջոցով պետք է յերեխաներին սովորեցնի տեսնելու և դիտելու իրենց շրջապատող առարկաները, ճշտի առարկաների ձևի և դույնի վերաբերյալ նրանց ունեցած պատկերացումները, յերեխաներին զինի տեխնիկական նախնական ունակություններով մատիտով ու ներկերով աշխատելու մեջ և հիմնական տարրական կանոնների գիտելիքներով, վերոնք անհրաժեշտ են նրանց ծանոթ, պարզ առարկաները պատկերելու համար:

Վերոհիշյալից յեղնելով, տարրական դպրոցի նկարչության ուսուցման դասընթացը կազմվում է հետևյալ բաժիններից՝

1. Ամենահասարակ վարժություններ՝ մատիտով ու ներկերով աշխատելու տարրական տեխնիկական զարգացնելու համար, վորտեղ մտնում են նախշեր կազմելու զանազան վարժություններ:
2. Առանձին առարկաների և առարկաների խմբերի նկարումը դիտողությամբ և ընակախոսությամբ:
3. Նկարչություն զանազան թեմաներով՝ հիշողությամբ և պատկերացումով:

Առանձին առարկաների դիտողությամբ ուրվագծումը

*) Մրգերը կազմել են Գեղարվեստական դասախարակության Կենտր. Տան աշխատակիցներ՝ Յե. Կոնդարյանը, Գ. Լարունսկայան և Յե. Ռոժկովան:

սկսվում է 1-ին դասարանից և հանդիսանում է վորպես առանձին առարկաներ և առարկաների խմբեր բնականից նկարելու նախապատրաստական աշխատանք, այսինքն, վորպես մեթոդ, վորն ոգնում է յերեխային սովորել առարկան տեսնել, վերլուծել նրա ձևը, հիշել այն և հասկանալ առարկաները պատկերելու հիմնական կանոնները:

Շատ կարևոր է հենց սկզբից խիստ հետևել յերեխայի ճիշտ նստվածքին, հետևել, թե ինչպես է բռնում մատիտը, ինչպես է նրա առջ գրված տետրակը և այլն: Առանձին առարկաների ուրվագծման բոլոր առաջագրանքները պետք է կատարվեն բավականին խոշոր նկարների ձևով (մեկ եջի վրա 2—3 առարկա) և, տետրերում նկարելու հետ զուգընթաց, յերեխաների կողմից կատարվեն նաև դասարանական գրատախտակի վրա:

Առանձին առարկաներն ինչպես դիտողությամբ, այնպես և բնականից նկարելիս յերեխաները հանդիսանում է առարկայի ձևի և կազմության վերլուծումը:

Դիտողությամբ առանձին առարկաների ուրվագծումները կատարվում են հետևյալ կերպ՝

Ուսուցիչը վաղորդք ջոկում է նկարելու առարկաները և բերում է դասարան, առարկան նա ցույց է տալիս ամբողջ դասարանին և ոժանդակ հարցերի միջոցով ոգնում է յերեխաներին ճանաչելու նրա ձևը (ինչ մասերից է նա կազմված, ինչն է նրա մեջ ավելի—լայնությունը, թե բարձրությունը, խորություն ունի թե վոչ և այլն):

Սովորաբար մեկ դասում կարելի յե 2—3 առարկաների ուրվագծումներ կատարել:

Սկսած 3-րդ դասարանից՝ մտցվում է բնականից նկարելու առարկայի պատկերելը վորոչ հայացքակետից: Այստեղ ուսուցիչը պետք է սովորողի ուշադրությունը հրավիրի առարկայի զերքից կախված նրա ձևի տեսանելի փոփոխումների վրա՝ որինակ, գլանաձև առարկայի (բաժակ, գավաթ, դուլ, թմբուկ և այլն) հիմքերի և ուղղանկյունաձև առարկաների (տուփ, արկղ, հաստ գերք) նիստերի փոփոխման վրա: Դա կոգնի աշակերտներին յուրացնել ծավալային առարկաները, ինչ զիրքով վոր նրանք յերեկում են նկարողի նստած տեղից, գրադետ կերպով պատկերելու հիմնական որենքները:

3-րդ և 4-րդ դասարաններում աշխատանքի այս ձևը պետք է առաջնակարգ տեղ գրավի ինչպես նկարչությանը հատկացված ժամերի քանակության, այնպես էլ իր նշանակության տեսակետից:

Առանձին առարկաներ բնականից նկարելիս, պետք է սկսել կրթ և գլանաձև առարկաներից, վորոնց յետաջափ պատկերավորելը յերեխաների համար ավելի հեշտ է, հետո անցնել ուղղանկյունաձև պարզագույն առարկաներին:

Բնականից ուրվագծելու համար վոչ խոշոր առարկաների հետ զուգընթաց, անպայման պետք է տրվեն նաև ուղղանկյունաձև խոշոր առարկաներ (արկղ, ճամբրուկ), վորտեղ զուգահեռ գծերի թվացող մոտեցումը հեշտ կլինի տեսնել: Չափազանց ոգտակար են նաև միենույն առարկայի տարբեր զերքերով ուրվագծումները, վորոնք ոգնում են պարզելու առարկայի մակերեկվայթների և անկյունների տեսանելի փոփոխությունները՝ կախված նկարողի նկատմամբ ունեցած զերքից: Առարկաների խումբը բնականից նկարելը նույնպես պետք է վերլուծությունից սկսել:

Հարցերի միջոցով, ուսուցիչը պետք է յերեխաներին ոգնի խմբի միջի առարկաները միմյանց հետ համեմատելուն և պարզելու՝ թե վոր առարկան ավելի մեծ է, վորն ավելի փոքր, վորն ավելի հեռու յե, վորն ավելի լուսավոր, վորն ավելի խավար: Առանձին առարկաների ուրվագծումները բնականից կամ դիտողությամբ կարելի յե կատարել ուղղակի մատիտով և ապա գունավորել:

Վորպեսզի բնականից նկարելու համար զրված առարկաների խումբն ամբողջ դասարանին ավելի լավ տեսանելի լինի, հարկավոր է անպայման դասարանում ունենալ միատեսակ առարկաների 2—3 խումբ, վորոնք կարելի կլինի դասավորել դասարանի զանազան մասերում:

Մարդու ուրվագծումը բնականից, վորպես տարրական դպրոցի աշակերտների համար շատ դժվար և բարդ ձև, սիստեմատիկ կերպով սկսվում է 5-րդ դասարանից:

Տարրական դպրոցում մարդու նկարումը տարվում է հիշողությամբ՝ զանազան թեմաների շուրջը կատարած աշխատանքում: Ընդ սմին անհրաժեշտ է, վոր ուսուցիչը յերեխաներին զրգի

դիտելու մարդուն, նրա կազմութունը, մարմնի մասերի փոխա-
րաբերութուններն ըստ մեծության, ընտրող շարժումները, վոր
և կողմի տարրական դպրոցի աշակերտներին 4-րդ դասարանում
մարդ պատկերել, նրա Ֆիզուրայի ընդհանուր մասերի համեմա-
տական հարաբերութունների վերարտադրությամբ:

Պարզագույն վարժութունների կատարումը և նախշերի
կազմումը նպատակ ունի զարգացնելու չափի և գույնի զգա-
ցումը, ստեղծագործական ընդունակութունները և սրա հետ
միաժամանակ մատիտով աշխատելու տեխնիկան, և նախնական
ուսակութուններ տալու՝ ներկերով աշխատելու համար:

Առաջադրութունները կատարվում են մատիտով և ներկե-
րով, ըստ ուսուցչի նկարագրության (ուսուցիչը գրատախտակի
վրա նախապես ցույց և տալիս), իսկ հետո արգեն նման վար-
ժութուններ կատարում են իրենք սովորողներն ինքնուրույ-
նաբար: Այս պարզ նախշերից նրանք հեշտությամբ կանցնեն
ծաղիկներից, բույսերից նախշեր կազմելուն, վոր մտցվում է
նկարչության ծրագրի մեջ 3-րդ դասարանից:

Առաջադրութունը բացատրելիս ուսուցիչը պետք է յերե-
կաներին պատմի նախշի առանձնահատկութունների, նրա նշա-
նակության մասին (կտոր, պաստառ, հագուստի զարգարանք-
ներ):

Շրիֆտի վրա կատարվող աշխատանքը պետք է յերեխա-
ներին սովորեցնի 4-րդ դասարանում, ամենահասարակ պրիոմ-
ների ոգնությամբ քանոնով տառեր գծագրելը և տառերն ըստ
վանդակի գրելը (գրել ձողաձև կամ ժապավինաձև շրիֆտով,
վորպես կատարման համար ամենապարզ ու դյուրընթեռնելի
շրիֆտ): Այս աշխատանքի համար ուսուցիչը պետք է պատրաստի
ուսուցիչական ու դիտողական մի քանի պարագաներ՝ ձողաձև
շրիֆտի իր գրած տառերի և առանձին բառերի նմուշներ, ըստ-
վարաթղթի կամ հաստ թղթի ուղղանկյունիներ՝ տառային վան-
դակներ գծելու համար, ինչպես նաև ձողիկներ, վորոնցով գըծ-
վում է տառը (ձողիկի բարձրութունը պետք է հավասար լինի
տառի բարձրությանը, իսկ լայնութունը՝ տառերի գծերի հաս-
տությանը):

Պակատի համար նկարը պետք է կազմված լինի 2-3
պարզագույն առարկաներից, վորոնք համապատասխանում են

պակատի բովանդակությանը: Ամենից լավ է, պակատի համար
վերցնել այն առարկաները, վորոնք յերեխաները նկարել են
բնականից և լավ ծանոթ են: Որինակ, «Հետևել մաքրությանը»
պակատի վրա՝ ջրաման, ոճառ, ատամի փողու տուփ, ատամի
խոզանակ և այլն:

Ջանազան թեմաներով նկարչութունը պետք է տարվի
բոլոր դասարաններում: Այդպիսի նկարչութունը դաստիարա-
կում է յերեխայի ստեղծագործական ընդունակութունները,
վարժեցնում է նրան դիտել, իրեն հաշիվ տալ իր տեսածի նկատ-
մամբ, հարստացնում է յերեխայի պատկերացումները, միավո-
րում և ամրապնդում նրա ձեռք բերած հմտութուններն ու
տեխնիկական ունակութունները: Բացի այդ, առարկաները և
յերևույթները ամբողջությամբ պատկերելը ոգնում է սովորող-
ներին տիրապետելու առարկաների ըստ մեծության փոխաբա-
բերութունների վերարտադրությանը և տարածության մեջ
նրանց պատկերավորմանը:

Սրա հետ միասին, թեմաներով նկարչութունը սովորեց-
նում է յերեխային իր բազմաթիվ պատկերացումներից գիտակ-
ցորեն ընտրելու հատկանշական մոմենտներ ու առարկաներ, կապ
հաստատելով նրանց մեջ՝ պատկերելիք առարկաների բովանդա-
կութունն ամենալիակատար կերպով լուսաբանելու համար:

Ըստ թեմայի նկարելուց առաջ ուսուցչի գրույցը յերեխա-
ներին պետք է ոգնի պատկերավորման համար ամենահատկանը-
շական մոմենտներն ու առարկաներն ընտրելու, և ոժանդակ
հարցերի միջոցով յերեխաներին հարկադրի վերհիշելու և պատ-
կերացնելու առարկաների այն ձևը, գույնը և բնորոշ հատկանիշ-
ները, վորոնք յերեխան պետք է պատկերավորի՝ պարզելու, թե
վորն էր ավելի մեծ, վորը՝ փոքր, վորն է ավելի հեռու, վորը՝
մոտիկ: Ցանկալի յե գրական յերկի վորևե հատվածի ընթեր-
ցում, վորը բարձրացնում է յերեխայի հետաքրքրութունը ա-
ռաջադրվող թեմայի նկատմամբ և դեպի այն եմոցիոնալ վերա-
բերմունք է ստեղծում:

Համապատասխան թեմատիկա ընտրելիս այս բաժինը մեծ
նշանակութուն ունի սովորողների իդեական-քաղաքական դաս-
տիարակության հարցում: Թեմաների ընտրութունը պետք է
համապատասխանի յերեխաների տարիքին, պետք է ըստ հնա-

բաժնուրույթյան լաճնորեն ընդգրկի նրանց հետաքրքրություններն ու գիտելիքները և յերեխաներին լավ ծանոթ առարկաների պատկերավորում պահանջող թեմաներից անցնի՝ տարածության բարձր գործողությունների ու շարժման մեջ գտնվող մարդկանց խմբերի պատկերավորում պահանջող թեմաներին:

Բովանդակութունը կարելի չե վերցնել հանրակրթական առարկաներից (գրականությունից, աշխարհագրությունից, բնագիտությունից և այլն):

Համադարձակա՞ն էքսկուրսիաները և զբոսանքները կարող են ծառայել, վորպես հիանալի թեմա հիշողությամբ նկարելու համար:

Եքսկուրսիաների և զբոսանքների ժամանակ անհրաժեշտ և, վոր ուսուցիչն ուշադրութուն գարձնի աշակերտների մեջ զարգացնելու առարկաներն իրար հետ բաղդատել, նրանց չափերը, նրանց ձևի և գույնի բնորոշ առանձնահատկությունները համեմատել, վորը նրանց կողմից ճշտելու առարկաների վերաբերյալ ունեցած իրենց տեսողական պատկերացումները և կնպաստի դրանք ավելի ճիշտ և լիակատար կերպով պատկերավորելուն,

Անհրաժեշտ և սիստեմատիկորեն աշակերտների ուշադրութունը կենտրոնացնել առարկաների՝ դիտողից հեռացնելուց կախված՝ թվացող փոփոխության վրա (առարկաների փոքրանալը և զուգահեռ գծերի փոխվելը), վորը կողմից յերեխային իր նկարում տալ տարածական ճիշտ կառուցում:

Նկարները կարելի չե կատարել գունավոր մատիտով, ջրաներկերով: Գույնների կոմպլեկտը, վոր ստանում են յերեխաներն իրենց աշխատանքի համար, պետք է հետեզհետե ընդարձակել: 1-ին դասարանում չպետք է ընտրել վեց գույնից ավելի (կարմիր, դեղին, կապույտ, կանաչ, սև և նարնջագույն):

Այն պահանջները, վոր առաջադրվում են յերեխաներին, իրենց թեմատիկ նկարների գնահատման ժամանակ, չպետք է գերազանցեն տվյալ դասարանի համար ծրագրերում մատնանը՝ ված հմտությունների և ունակությունների ծավալից:

Անհրաժեշտ է յերեխաներին բացատրել նկարչության կանոններն ու աշխատանքի ձևերը: Այսպես որինակ՝ գծերի հորիզոնական և ուղղաձիգ ուղղությունները ստուգում են թղթի հորիզոնական և ուղղաձիգ յեզրերով: Յերեխաներին պետք է բա-

ցատրված լինի տարածությունը վերարտադրելու յեղանակները յուրաքանչյուր դասարանի հմտությունների և ունակությունների սահմաններին համապատասխան՝ թղթի թերթի վրա առարկաներն ավելի վերև և ավելի ներքև, յետ և առաջ դասավորելը, հեռավոր առարկաների փոքրացումը:

Նկարչության դասը, այնպիս ինչպես նաև ամեն մի առարկայի դաս, պետք է խնամքով կազմակերպված լինի: Յուրաքանչյուր դաս կազմվում է հետեվյալ մոմենտներից՝ ուսուցչի կողմից առաջադրանքի պարզաբանումը, նյութի բաժանումը, յերեխաների անհատական աշխատանքը առաջադրանքի վրա, ուսուցչի կողմից նայելը և ոգնելը յերեխաներին կատարման պրոցեսում, ուսուցչի կողմից կատարման յեղանակներ և տեխնիկական պրիմիտիվ ցույց տալը, զբաղատախտակի վրա առանձին առաջադրանքների կատարում, առանձին աշխատանքների նայումը և ըննարկումը՝ տիպիկ սխալների պարզաբանումով:

Առաջադրանքներ կատարելու ժամանակ, ուսուցիչը պետք է յերեխաներին ցույց տա տեխնիկական անհրաժեշտ ոգնություն, ցույց տալով, թե ինչպես պետք է մատիտը բռնել, վրձիչով աշխատել, ներկերից ոգտվել, ինչպես նստել, թուղթը բռնել: Աշխատանքի պրոցեսում նա պետք է ուշադրութուն գարձնի թղթի վրա նկարը ճիշտ դասավորելու վրա (հարկավոր է նկարն այնպես դասավորել, վոր բոլորը տեղավորվի և, միաժամանակ, թուղթն ամբողջովին ոգտագործված լինի):

Յերեխաներին ցուցումներ տալիս, պետք է հաշվի առնել այն հմտությունները և ունակությունները, վոր նախատեսված են ծրագրում: Որինակ, ունակություններից մեկը, վորը պետք է տիրապետեն 1-ին դասարանի բոլոր աշակերտները ուսումնական տարվա վերջում դա՝ ուղղանկյունագծային ձև նկարելիս հորիզոնական և ուղղաձիգ գծերի ուղղությունը ճիշտ վերարտադրելու հմտությունն է: Ուստի ուսուցիչը պետք է աշխատանքի պրոցեսում սիստեմատիկաբար յերեխայի ուշադրությունը հրավերի այն բանի վրա, վոր ուղղանկյան առարկաները (ղուռը, տունը, ցանկապատը) կանգնած լինեն, և վոչ թե ընկնեն, այսինքն՝ վորպեսզի յերեխան ըստ հնարավորության տա ուղղաձիգ և հորիզոնական գծեր և վոչ թե կոր կամ թեք գծեր: Նույնն անհրաժեշտ է անել Յ-րդ դասարանում, տարածության յերեկույթները՝

առարկաների մեկը մյուսի հետև զասավորելը, զանազան հատա-
կագծեր (առարկաների խմբեր՝ բնականից կատարած նկարնե-
րի մեջ), առարկաների փոքրացում և հորիզոնականների փո-
փոխություններ (սյուսետային նկարում) վերարտադրելու առնչ-
չությամբ: Մի շարք պրիոմներ պետք է ցույց տա անմիջապես
ինքն ուսուցիչը, որինակ՝ ինչպես սկսել առարկաներ նկարելը,
ինչից սկսել, ինչպես և ինչ հաջորդականությամբ կատարել աշ-
խատանքը և այլն, ինչպես ձեռնամուխ լինել շրիֆտի նկարմանը
և որնամենտի կառուցմանը՝ տարրերից (գծերից, կետերից, կի-
սաշրջաններից): Շրջագծերի նկարումը, առարկայի մակերևույթ-
ների փոփոխումները՝ կախված նկարողի նկատմամբ նրանց ու-
նեցած դիրքից (զլանսիս առարկաների մեջ շրջագծի կրճատում),
թղթի վրա մի խումբ առարկաներ զասավորելը—այս բոլորը
ուսուցչից պահանջում են անհրաժեշտ ցուցումներ և ցուցագ-
րում:

Անհրաժեշտ է հնարավորություն տալ իրենց՝ սովորողներին
գրատախտակի վրա նկարելու, գրատախտակի վրա նկարելը մեծ
բազմապիսություն կմտցնի դասերի մեջ և աշակերտներին
կվարժեցնի գրատախտակի վրա մեծ չափերով աշխատելու, վորը
չափազանց ոգտակար է ձեռքի և աչքի զարգացման համար:

Գրատախտակի վրա յերեխաների կողմից հերթականու-
թյան կարգով կարող են կատարվել առանձին առարկաների
ուրվագծում, ընդ վորում գրատախտակի վրա կատարված աշխա-
տանքի գնահատականն ուսուցիչը կարող է տալ հենց այդտեղ՝
դասարանում, վորը կոգնի յերեխաներին պարզելու իրենց սխալ-
ներն ու թերությունները:

Մեծ նշանակություն ունեն դասարանում ավարտած աշ-
խատանքների գիտումն ու քննարկումը: Այդ նպատակով աշա-
կերտների կողմից առաջադրանքները գեո կատարելու պրոցեսում
ուսուցիչը պետք է նշի և հետո վերցնի, ինչպես բացասական, այն-
պես և դրական ամենաբնորոշ աշխատանքները:

Նկարները պետք է գնահատվեն ուսուցչի կողմից նախ
և առաջ այն ունակությունների և հմտությունների տեսակետից,
վորոնք նախատեսված են ծրագրով, ինչպես նաև սյուսետն լու-
սաբանելու տեսանկյունից (կարողացել է արդյոք յերեխան
պատկերավորման համար ընտրել ամենաբնորոշ մոմենտներն ու

առարկաները, կարողացել է արդյոք զասավորել դրանք) և տեխ-
նիկական տեսակետից (նկարները արդյոք խնամքով և մաքրե-
ր են կատարված):

Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել ուսումնական
նյութն ըստ ժամանակի բաշխելու վրա (բոլոր տեսակի աշխա-
տանքները, վորոնք նախատեսված են ավյալ դասարանի հա-
մար, կատարվում են ամբողջ ուսումնական տարվա ընթացքում):

Ծ Ր Ա Գ Ի Ր

Առաջին դասարան

1. Առանձին առարկաների նկարումն ըստ դիտողութայան (17 ժամ)

Ուսուցիչը ցույց է տալիս աշակերտներին այն առարկան, վորը նրանք պիտք է նկարեն, և յերեխաների հետ միասին քննում է առարկայի ձևը, թվարկում է առարկայի մասերը, աշակերտների ուշադրութունը հրավիրում է առարկայի մասերի համեմատական մեծութունների վրա (լինչն է ավելի մեծ, ինչն ավելի փոքր, ինչպես է առարկայի բարձրութունը լայնութայան հետ համեմատած): Զրույցում պարզվում է նաև առարկայի բնորոշ գույնը:

Առարկայի ձևն ու գույնը ցույց տալուց և դրանց մասին զրուցելուց հետո, ուսուցիչն աշակերտներին առաջարկում է նկարել առարկան:

Աշխատանքի ժամանակ աշակերտները կարող են իրենք կամ ուսուցչի առաջարկութայամբ կրկին դիտել առարկան, վորպեսզի առարկայի ձևն ու գույնը նկարում ավելի լավ վերարտադրեն:

Աշխատանքի այդպիսի ձևը կոչվում է նկարչութուն դիտողութայամբ և նպատակ ունի վարժեցնել աշակերտներին զննելու առարկաների ձևը, նաև տալ աշակերտներին ուղիղ, ուղղա-ձիգ, հորիզոնական և պարփակված կոր գծեր նկարելու ունակութուններ:

Աշխատանքը տարվում է սև և գունավոր մատիտներով կամ ներկերով:

ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ՝ ԸՍՏ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Բանոն, փակ տետրակ (շապիկի վրան պիտակ կպցրած), ծրար, թղթապանակ, նոտաների թղթապանակ:

2. Ներկատախտակ սովորաթղթից, ուղղանկյունի ու ձվաձև:

3. Տերևներ (բարդենու, յասամանու, լորենու և այլն):

4. Ծյուղեր (հասարակ ձևի փոքրաթիվ տերևներով, որինակ՝ բարդենու ճյուղ, յասամանու ճյուղ, թանթրվենու ճյուղ):

5. Խնձոր, տանձ, սալոր:

6. Շաղգամ, պ. միզոր, վարունգ:

7. Զանազան ձևի շաքարամաններ:

8. Գավաթ, բաժակ, թաս:

9. Խաղալիքներ՝ դույլիկ, բահիկ, գնդակ և այլն:

10. Ծակնղեղ, բողկ, գազար:

11. Խնձոր, ձու, վարունգ, գազար (առարկաների բնորոշ ձևի վերարտադրման առաջադրանք):

12. Զմերուկ և խնձոր: Դրում և վարունգ (համեմատական մեծութունների վերարտադրման առաջադրանք):

Վերոհիշյալ բոլոր առաջադրանքները բաշխվում են ամբողջ տարվա վրա և կատարվում են ըստ հնարավորութայան խոշոր չափերով՝ մեկ եջի վրա 2—3 առարկա:

Դեկորատիվ աշխատանք (10 ժամ)

Դեկորատիվ աշխատանքը, վորպես զանազան նախշեր կազմելու վարժութուններ, անց է կացվում յերեխաների ստեղծագործական ընդունակութունները, նրանց տարրական տեխնիկական ունակութունները մատիտով և վրձինով աշխատելու մեջ զարգացնելու նպատակով, այն է՝ ուղիղ գծեր, ուղղանկյուններ, շրջագծ նկարել, նախշի մասերը հերթափոխել, նաև գույները, որինակ՝ սպիտակ, սև, կապույտ, կարմիր, դեղին, կանաչ, նարնջադույն, դարչնագույն, վորոշելու և ձիշտ անվանելու հմտութունը զարգացնելու նպատակով:

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

- ա) Նախշած յերիղ (գրքերի մեջ նշան դնելու համար):
- բ) Շրջանակ՝ զանազան մեծութայան ու գույնի, մեկը մյուս-

սի վրա ընկած շրջաններից կազմված նախընտրով, տետրակի
յերեսը կամ շապիկը զարգարելու համար:

դ) Շրջան, վորը ծածկված է գանազան մեծության շրջան-
ներից և բեկյալ գծերից բաղկացած նախընտրով—դասավորված
կենտրոնի շուրջը:

դ) Քառակուսի, վորը ծածկված է նախընտրով (հասվող ան-
կյունագծեր, ուղիղ, բեկյալ գծեր և շրջաններ):

Յուրաքանչյուր առաջադրանքին մեկ ժամ է տրվում: Առա-
ջադրանքները կատարվում են ճիշտ ուսուցչի
տված որինակով:

Հաջորդ դասին սովորողները միևնույն տարրերից ինքնու-
րույնաբար կատարում են նախը մատիտով կամ ներկով:

3. Նկարչություն քեմաներով (12 ժամ)

Յերեսաների իրենց ընտրած թեմաներով նկարչությունը
(2 ժամ) և ուսուցչի տված թեմաներով նկարչությունը (10
ժամ) նպատակ ունի վարժեցնել յերեսաներին դիտելու իրենց շրջա-
պատող իրականության մեջ գտնվող առարկաները, համեմատել
դրանք իրար հետ, դասավորել նրանց թերթի վրա, գտնել և
պատկերավորել նրանց բնորոշ հատկանիշները:

Բացի այդ, թեմաներով նկարչությունը տարվում է աշխա-
տանքի մյուս բաժիններում ձեռք բերած ուսակություններն
ամրապնդելու նպատակով:

Թեմաները պետք է վերցնել շրջապատող իրականություն-
ներից և գրականությունից:

Աշխատանքը կատարվում է մատիտով, ջրաներկերով,
գունավոր մատիտներով:

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Յերեսաների ամառվա կյանքի հետաքրքրական մոմենտ-
ներն ըստ իրենց ընտրության. որինակ՝ նավակով զբոսանքը,
անտառում հանդիպում վոդնու, նապաստակի, սկյուռի և այլ
կենդանիների:

2. Կոլտնտեսության բերքը (հավաքած բերք՝ մրգեր, բան-
ջարեղեն և այլն):

3. Աշունը՝ դեպի անտառը, պուրակը, այգին կամ վորեն
զբոսավայր կատարած քսակուրսիայից կամ զբոսանքից ստացած
տպավորությունների ուրվագծում:

4. և 5. Դյուղը և քաղաքը: Քաղաքային և դյուղական զանա-
զան շենքերի՝ գործարանի, մեծ բնակելի տան, կոոպերատիվի,
գարոցի, կինոյի և այլն, կամ գյուղատնտեսության, ակումբի, բնակելի
տան, անասնանոցի և այլ շենքերի բնորոշ հատկանիշներ
վերարտադրություն: Փողոցը պատկերավորվում է վոջ
խորու թյամբ, նրա միայն մի կողմն է նկարվում:

6. Հովտեմբերյան տունը՝ զարգարված քաղաքը, յերեսա-
ների զբոսանքն ավտոմոբիլներով:

7. Առաջին ձյունը: Նկարը կատարվում է գունավոր թղթի
վրա, տետրակի շապիկը՝ գունավոր մատիտներով ու կավճիկնե-
րով:

8. Չմուսնն անտառում:

9. Յեղևնի (տոնածառ):

10. Հեքիաթներ, պատմություններ կենդանիների և թռչուն-
ների մասին:

11. Գարուն, թռչունների գալը:

12. Ծաղիկներ:

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարողանալ, նկարելիս ճիշտ նստել, մատիտը բռնել,
թուղթը դնել, վրձինով և մատիտով աշխատել:

2. Կարողանալ ճիշտ նկարել հորիզոնական և ուղղաձիգ
գծեր:

3. Կարողանալ պարզ կորագիծ ձևի առարկա (գնդակ,
լոնձոր, վարունգ, ձու) նկարելով, տալ պարփակված կորագիծ
և վերարտադրել նրանց հիմնական գծային ձևը:

4. Կարողանալ վերարտադրել նկարվող առարկայի լայնու-
թյան և յերկարության ըստ մեծության փոխհարաբերություն-
ները:

5. Կարողանալ թղթի վրա նկարը տեղավորել, հաշվի առ-
նելով թղթի չափն ու ձևը:

6. Կարողանալ զանազանել և ճիշտ անվանել գույները:

(սպիտակ, սև, կարմիր, դեղին, կանաչ, դարչնագույն, նարնջագույն):

7. Կարողանալ խնամքով գունադարձել յեզրագծի սահմանը:

Յ երկրորդ դասարան

1. Առանձին առարկաներ դիտողությամբ նկարելը (19 ժամ)

I դասարանում անցած հմտությունների և ունակությունների խորացում և ամրապնդում:

Նկարները կատարվում են սև, գունավոր մատիտներով ու ներկերով:

ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՄԲ ՆԿԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ուռենու, կաղնու, թղկենու տերևներ:
2. Տերևներով ճյուղեր:
3. Պարզ ձև ունեցող խոշոր ծաղիկներ՝ (կտրված), գարնանածաղիկ (հարսնամատ), մանիշակ:
4. Զանազան ձևերի խնձորներ ու տանձեր:
4. Ճակնդեղ, տաքտեղ, կաղամբի գլուխ (սովորական և գունավոր):
6. Սպիտակ սունկ, դեղնագույն-թունավոր սունկ և այլ սնկեր:
7. Աղեղավոր սղոց (սիսո), լորդիկ (նրբասղոց):
8. Մուրճ, մետաղասղոց, իզմիր կամ գուր:
9. Զանազան ձևի պուլիկներ:
10. Խաղալիքներ՝ գնդակ, գուլլեր (ներքևում նեղացող), հոր:
11. Գավաթ, թաս, սափոր:
12. Թեյաման, կաթնաման, սրճաման:
13. Ծաղկաման:
14. Խաղալիքներ՝ կենդանիներ և թռչուններ, որինակ՝ սկյուռ, նապաստակ, խող, փիղ, բադ, աքաղաղ:

2. Դեկորատիվ աշխատանք (8 ժամ)

Նախշեր կազմել և զանազան վարժություններ կատարել մատիտով ու ներկերով աշխատելու տարրական տեխնիկական ունակություններ զարգացնելու համար. կարողանալ զուրբից, կետերից և շրջանակներից բաղկացած պարզագույն նախշով ծածկել ուղղանկյունին, քառակուսին և շրջանը, համաչափորեն հերթափոխելով դրանք (ամենահասարակ ություն), կազմել շրջանի մեջ կենտրոնը, քառակուսու մեջ անկյունները, կարողանալ շրաներիով հավասար գունավորել վոշ մեծ հարթութուն և հիմնական գույները (կարմիր, կապույտ, դեղին) խառնելու միջոցով ստանալ նոր գույներ:

1. Ներկել փոքրիկ քառակուսի, ուղղանկյուն գծով (աչքաչափով) կիսել այն և ստացված յուրաքանչյուր կեսը դարձյալ կիսել: Ընդ ա այդպես ել անցկացնել հորիզոնական գծեր: Ստացած ցանցի քառակուսիները զարգարել տարբեր գույնի կետերով կամ շրջաններով: Առաջադրանքը կատարվում և գունավոր մատիտներով:

2. Յերեխաների կողմից զանազան նախշեր, ցանցեր կազմել և նրանցով՝ քառակուսի լսնելը:

3. Յերիզի նկարելը (յերկու գուգահեռ գծերի անցկացում) և նրա զարգարելը մանր շրջանների և քառակուսիների հերթափոխումով (մեծ շրջան, փոքր քառակուսի): Առաջադրանքը կատարվում և մատիտով ու ներկերով:

4. Յերեխաների կողմից յերիզի համար նախշերի կազմում:

5. Փոքր մակերեսների (շրջանների կամ ուղղանկյունների) հարթ գունավորման վարժություն:

7. Յերիզի համար նախշեր, վոր կազմում են յերեխաները կրկնվող ծաղիկներից և տերևներից:

7. Հիմնական գույներից նոր գույներ (նարնջագույն, կանաչ, մանիշակագույն) կազմելը—կարմիրը և դեղինը (նարնջագույն), կապույտն ու դեղինը (կանաչ), կարմիրն ու կապույտը (մանիշակագույն) խառնելու միջոցով և դրանցով փոքրիկ հարթություններ գունավորելը:

8. Շրջանի (բաժակափսներ) նախշ, վորը կազմում են յերեխաները ծաղիկներից:

6310
38



1-ին և 3-րդ առաջադրանքները կատարվում են ճիշտ ուսուցչի ցույց տված որինակով:

3. Թեմաներով նկարչություն (12 ժամ)

Աշակերտների կողմից ընտրած թեմաներով նկարչությունը (2 ժամ) և ուսուցչի կողմից ընտրած թեմաներով հիշողությունը (10 ժամ) կատարվում են ու յերևակայությունը նկարչությունը (10 ժամ) կատարվում են այն նպատակով, վոր սովորողները վարժվեն դիտելու իրենց շրջապատի իրականությունը, համեմատեն նրանց, տեսնեն և նկարում վերարտադրեն առարկաների, ըստ մեծություն, փոխհարաբերությունները (տունը մեծ է մարդուց, կենդանին փոքր է ծառից և այլն) և նրանց բնորոշ հատկանիշները:

Զանազան թեմաներով նկարչությունը կատարվում է նաև աշակերտների մյուս բաժինների կատարած աշխատանքների ընթացքում աշակերտների ձեռք բերած ունակությունները ամրապնդելու նպատակով:

Թեմաները պետք է վերցնել շրջապատի իրականությունից և գրականությունից:

Նկարները կատարվում են մատիտով, ջրաներկերով և գուանավոր մատիտներով:

Որինակելի թեմաներ

1. Պողոտու այգի:
2. Ամառը գետի վրա:
3. Բանջարեղենի կրպակ փողոցում:
4. Եքսկուրսիա կամ զբոսանք դեպի այգի, պուրակ, անտառ:
5. Պատվածքների իլյուստրացիա:
6. Թռչնոց:
7. Զրային տրանսպորտ:
8. Պուշկինի, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի հեքիաթների իլյուստրացիա:
9. Ծաղկավաճառման կրպակ կամ խանութ:
10. Գարնան անտառում:

1. Կարողանալ նկարում վերարտադրել առարկաների մեծություն հիմնական բնորոշ փոխհարաբերությունները:

2. Կարողանալ վերարտադրել պարզագույն առարկաների հիմնական բնորոշ վճային ձևը:

3. Կարողանալ հերթափոխով (պարզագույն սխեմա) գծերից, կետերից և շրջաններից բաղկացած պարզագույն նախշով ցնել շրջան, քառակուսի, ուղղանկյունի:

4. Կարողանալ հիմնական գույներից սատնալ նոր գույներ ներկերը խառնելու միջոցով:

Յ Ե Ր Ը Ր Դ Գ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

1. Առանձին առարկաների բնականից նկարումը (19 ժամ)

Սովորողները նկարում են իրենց առաջ դրված առարկան, այնպես, ինչպես տեսնում են իրենց սեղից:

Բնականից նկարելն իր առաջ խնդիր է դնում սովորողներին աշակերտներին՝ ճիշտ պատկերել առարկաների բնորոշ ծավալային ձևը՝ գծայնորեն, առանց լուսաստվերի, վերարտադրելով փղանաձև առարկաների մեջ՝ շրջանի, իսկ ուղղանկյունաձև առարկաների մեջ՝ յեղրագծերի հեռանկարային փոփոխությունները, հաշվել առնելով թղթի թերթի չափը և նկարել առարկաները համապատասխան մեծությամբ:

ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՑԱՆԿ

1. Ողակիքների՝ գնդակ, հոր:
2. Բանջարեղեններ ու մրգեր:
3. Բանկաներ, բաժակներ և գավաթներ զանազան մեծություն ու ձևի:
4. Զանազանաձև պուլիկներ:
5. Նավթաման, շիշ:
6. Դուլիկ և ցնցուղ:
7. Սափոր, կաթսա:

8. Մրճաման, կաթի աման:

9. Թեյաման, զավաթ, շաքարաման:

1. Զանազանաձև տուփեր, ճամբրուկ, արկղ և գիրք:

11. Ակվարիում:

12. Ծաղիկներ, ձյուղեր, տերևներ (ձևով հասարակ ու խոշոր):

13. Բույս ծաղկամանում:

2. Դեկորատիվ առխառնակներ (8 ժամ)

Այս բաժնի առաջադրանքների կատարումը 3-րդ դասարանում խնդիր և դնում ամրապնդելու և խորացնելու նախորդ դասարանում մատիտով ու ներկերով աշխատանքների մեջ յերևալաների ձևը բերած հմտութունները և ունակութունները: Ներկերով աշխատանքի ունակութունները զարգացնելու համար աշակերտներին տրվում են զանազան վարժութուններ, որինակ, միևնույն գույնի կարմիր, կապույտ և գուրջ յերանգների ընտելութունը սկսած ամենամուգից մինչև ամենաբացը (4—5 յերանգի սահմաններում) և զրանցով փոքրիկ հարթութուններ ծածկելու և նախշեր կազմելու առաջադրանքներ:

1. Ծաղիկներից և տերևներից կազմած նախշով շրջանի լցում:

2. Մրգերից և հատապտուղներից կազմած նախշերով շերտի լցում (սենյակը զարդարելու համար):

3. Յերեխաների ընտրած որյեկաններից նախշ կազմելը զուլի համար:

3. Շրիֆտ (4 ժամ)

Շրիֆտի աշխատանքը տարվում է աշակերտների աչքաչափը զարգացնելու, քանոնի ոգնությամբ տառեր նկարելու, թերթի վրա փոքրիկ մակագրութուններ տեղափոխելու և յեզրագծով ներկելու հմտութուն ձևը բերելու նպատակով:

ա) Տառերի գծագրումը ուղղանկյուն և սովորաթղթից պատրաստած քանոնի ոգնությամբ:

բ) Տառերի գունավորումը:

գ) Փոքրիկ մակագրութունների կազմում (պատի թերթի վերնագիրը, տետրակի, զրբի շապիկի վրա գրելը):

4. Նկարչություն բեմայով (8 ժամ)

Թեմատիկ նկարչությունը խնդիր և դնում սովորեցնել աշակերտներին դիտել շրջապատի իրականությունը և առաջադրված թեմայից ընտրել բնորոշ մոմենտն ու թեման արտահայտող զխավոր առարկաները, ճիշտ վերարտադրել առարկաների հիմնական համեմատական չափերը, և վերարտադրել տարածությունը՝ թղթի վրա առարկաներն ավելի ներքև կամ ավելի բարձր, հեռ և առաջ պատկերավորելու միջոցով, հաշվե առնելով հորիզոնի գիծը:

Աշխատանքները կատարվում են մատիտով ու ներկերով: Նկարչություն աշակերտների ընտրած թեմաների շուրջը (2 ժամ) և ուսուցչի առաջարկած թեմաներով (6 ժամ):

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Ավիացիայի որը:
2. Մնկերի հավաքումն անտառում:
3. Անձրևոտ որ:
4. Մեր նորակառույցները:
5. Իլյուստրացիաներ հեռավոր յերկրների վերաբերյալ պատմվածքների շուրջը:
6. Իլյուստրացիաներ կրկնովի, Աթաբեկ Խնկոյանի առակների:
7. Իլյուստրացիաներ Պուշկինի, Հ. Թումանյանի, Դ. Աղայանի հեքիաթների:
8. Սառցի բացվելը:
9. Գարնան խաղ բաց ոգում (թղթե ոգապարիկ բաց թողնելը):

ՀՍՏՈՒՅՑՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒՅՑՈՒՆՆԵՐ

1. Կարողանալ պատկերել առարկաների ծավալային ընտրող ձևը (գծելով) և նրանց մասերի հիմնական համեմատականությունը, վերարտադրելով հարթությունների (շրջանի, նիտերի) հեռանկարային փոփոխությունները:

2. Բնականից և դիտողությամբ ուրվագծելիս կարողանալ գիտակցորեն դասավորել առարկաները թղթի թերթի վրա և նկարել նրանց համապատասխան մեծությամբ:

3. Կարողանալ ընտրել առարկաների բնորոշ դույնը:

4. Կարողանալ վերարտադրել առարկաների մեծութունների բնորոշ հարաբերությունները:

5. Թեմաներով նկարելիս կարողանալ ընտրել այն մոմենտը, վորն ամենից ավելի յե լուսաբանում թեման և կարողանալ վերարտադրել տարածությունը՝ առարկաները հետ և առաջ, ավելի մոտ կամ ավելի հեռու (ավելի ներքև ու ավելի բարձր) դասավորելու միջոցով:

Չ ո ը ր ո ը դ դ ա ս ա ր ա ն

1. Առանձին առարկաներ յեվ առարկաների խմբերնալկանից նկարելը (25 ժամ)

Բնականից նկարագրողելու նպատակն և սովորեցնել առարկաների հիմնական ծավալային ձևը գծայնորեն ու լուսաստվերով (լույս, կիսաստվեր, ստվեր) ճիշտ վերարտադրել, նաև վերարտադրել առարկաների հիմնական հեռանկարային փոփոխություններն ու նրանց բնորոշ դույնը:

Առարկաների խումբ նկարելիս խնդիր և զրվում ճիշտ վերարտադրելու հատակադճերը՝ ավելի մոտ և ավելի հեռու մի առարկան մյուսից, հետ և առաջ:

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՅՈՒՅԱԿ ՄԱՏԻՏՈՎ ՆԿԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Իրդոն և թաս:
2. Թժրուկ կամ կլոր տուփ զանազան դիրքերով:
3. Սրճաման և գավաթ:
4. Չանազան ձևի սրվակներ և շեր:
5. Արկղ—զանազան դիրքերով:
6. Բաց և փակ տուփ:
7. Թռչունների և մանր կենդանիների խրտվիլակներ:
8. Ծաղկաման՝ բույսով և ցնցուղ:

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՅՈՒՅԱԿ ՄԱՏԻՏՈՎ ՈՒ ՆԵՐԿԵՐՈՎ ՆԿԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Բանջարեղեններ ու մրգեր:
2. Չանազան մեծությունների խնձորներ (2 հատ) և գավաթ:

բ)
7) Փո

ապի պուլիկ, կարմիր տաքտեղ և վարունգ:

4. Կաթնա և կարտոֆիլ (մի քանի հատ՝ առաջից, կողքից):
5. Տուփ՝ ներկերով և բանկա՝ վրձիններով:
6. Թռչուններ՝ խրտվիլակներ:
7. Կորած ծաղիկներ՝ վազի կամ գավաթի մեջ դրած:

3. Թեմաներով նկարչություն (8 ժամ)

Թեմաներով նկարչությունը խնդիր և դնում սովորեցնել առարկաներին դիտելու շրջապատի իրականությունը, առաջարկված թեմայում ընտրել բնորոշ մոմենտները, պատկերավորելու այն գլխավոր առարկաները, վորոնք լուսաբանում են թեման, ճիշտ վերարտադրել առարկաների միջի հիմնական փոխադարձ չափերը և վերարտադրել տարածությունը՝ հաշվի առնելով առարկաների հեռանկարային փոփոխությունները (փոքրացում) և զուգահեռ հորիզոնազճերի փոփոխությունները:

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՆԵՐ

1. «Պաղարանջարեղեն»-ի խանութը (քաղաքում) կամ բանջարեղենի կույտը կոլանտեսություն մեջ:
2. Իլյուստրացիա Պուշկինի, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի հեքիաթների:
3. Իլյուստրացիա Հ. Թումանյանի «Դաշտ ու այգի» կամ նեկրաստվի «Փոքրիկ գյուղացի» բանաստեղծությունների:
4. Յերկաթուղային կամուրջը:
5. Քաղաքային և գյուղական փողոցը (խորություն):
6. Ճանապարհն անտառում:

3. Շ Ր Ի Ք Տ (3 ժամ)

4-րդ դասարանում շրիֆտի աշխատանքը կատարվում է այն նպատակով, վոր սովորողները վարժվեն իրենց պատրաստած վանդակներով տառեր գրել՝ հաշվի առնելով տառերի հաստությունը, լայնությունը և բարձրությունը, կատարել փոփոխականություններ, զբաղվել ճիշտ սեղավորել թղթի թերմնալ և կանոնավոր կերպով գունավորել կոնաուրով:

- ա) Տառերի գծերը ցանցի միջոցով:
- Փոքրիկ մակագրություն նշագծում:

4. Առարկայական պրակաս-աղյուսակ (3 մաս)

Կատարվում է աշակերտներին առանձին առարկաների նկարները և ավյալ թեմայով մակագրությունը թղթի թերթի վրա գրատկցված կերպով տեղավորել սովորեցնելու նպատակով:

Պրակաս-աղյուսակի որինակելի թեմաներ՝ «Սովորում ենք գերազանց», «Հետեվիր մաքրություն», «Ճուշակագրվիր խմբակում»:

ՄԱՏՈՒՅՑՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒՅՑՈՒՆՆԵՐ

1. Կարողանալ պարզագույն և լավ ծանոթ առարկաների հիմնական ձևը՝ գծայնորեն և լուսաստվերով (լույս, կիսաստվեր, ստվեր) և նրանց բնորոշ գույնը վերարտադրել:

2. Կարողանալ հաշվի առնել և վերարտադրել առարկաների միջև յեղած հեռավորությունը (զանազան հատակագծեր ավելի մոտիկ, ավելի հեռու, հեռ և առաջ, ավելի հեռավոր առարկաների հեռանկարային փոքրացում և հեռացող հորիզոնագծերի փոփոխությունները):

3. Կարողանալ վերարտադրել խմբի մեջ առանձին առարկաների մեծությունների փոխհարաբերությունը և առարկաների մեջ հիմնական մասերի չափերի փոխհարաբերությունը:

4. Կարողանալ թերթի վրա առարկաների խումբ տեղավորելիս մատիտով թեթև նախնական ուրվագիծ նշել, հաշվի առնելով առարկաների հիմնական մեծություններն ու նրանց ձևը:

5. Թեմայով նկարելիս կարողանալ առանձնացնել զխավորն ու բնորոշը և աչքի ընկնող ձևով տար:

ՀՀ Ազգային գրադարան



NL0300089